

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

*ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2011Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍԻՆ*

**ԹԻՎ 7**

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2011թ. հունվար-հուլիսին

(%)

	2011թ.										
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	հուլիսը			հունվար-հուլիսը
	նախորդ ամսվա նկատմամբ							2010թ. դեկտեմբերի նկատմամբ	2010թ. հուլիսի նկատմամբ	2010թ. նկատմամբ	2010թ. հունվար-հուլիսի նկատմամբ
Սպառողական գների ինդեքսը ընդամենը	103.4	100.9	100.8	99.8	100.0	98.6	97.0	100.4	106.3	104.5	109.4
այդ թվում՝											
Սպառման ապրանքներ	104.8	100.7	100.8	99.7	100.1	98.0	95.8	99.6	108.1	105.0	111.6
Պարենային ապրանքներ	106.7	100.9	100.9	99.4	100.0	97.1	94.1	98.8	110.6	106.0	115.4
Ոգելից խմիչք, ծխախոտ	100.1	100.0	100.0	100.0	100.0	100.1	100.2	100.5	100.7	100.8	100.6
Ոչ պարենային ապրանքներ	100.2	100.2	100.5	100.5	100.5	100.1	100.0	102.1	103.1	103.0	103.1
Ծառայություններ	100.1	101.4	100.9	100.0	99.9	100.1	99.8	102.2	102.3	103.6	104.6


**Սպառողական գներ:** 2011թ. հուլիսին հունիսի համեմատ ՀՀ սպառողական շուկայում գրանցվել է 3.0% գնանկում, այդ թվում, պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները նվազել են 5.4%-ով, ծառայությունների սակագները՝ 0.2%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում գների ընդհանուր մակարդակը նշված ժամանակահատվածում մնացել է անփոփոխ:

2011թ. հուլիսին 2010թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100.4%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 98.9%, ոչ պարենային ապրանքներինը՝ 102.1%, ծառայությունների սակագներինը՝ 102.2%:

2011թ. հունվար-հուլիսին սպառողական գների միջին ամսական հավելվածը կազմել է 0.1%, ինչը 0.4 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (0.5%):

Սպառողական գների հավելվածը 2002-2011թթ. հուլիսին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



2011թ. հուլիսին 2010թ. հուլիսի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 106.3%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 109.6%, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.1%, ծառայությունների սակագներինը՝ 102.3%, իսկ հունվար-հուլիսին 2010թ. հունվար-հուլիսի համեմատ՝ համապատասխանաբար 109.4%, 114.0, 103.1 և 104.6%:

2011թ. հուլիսին 2010թ. համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 104.5%, այդ թվում, պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 105.5%, ոչ պարենային ապրանքների՝ 103.0%, ծառայությունների սակագների՝ 103.6%:

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2011թ. հուլիսին հունիսի համեմատ գրանցվել է սպառողական գների 4.1-2.2% գնանկում, ընդ որում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Թալինում: Մայրաքաղաքում սպառողական գները նվազել են 3.0%-ով:

**Պարենային ապրանքների գներ:** 2011թ. հուլիսին հունիսի համեմատ պարենային ապրանքների շուկայում արձանագրված գների ընդհանուր մակարդակի 5.9% նվազումը հիմնականում բանջարեղենի և կարտոֆիլի, մրգի ապրանքախմբերի 34.9% և 23.3% գնանկման արդյունք է: Դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 8-ում նշված ժամանակահատվածում արձանագրվել է 34.9-0.1% գնանկում, 4-ում՝ 0.1-2.9% գնաճ, իսկ մեկում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում<sup>1</sup> 2011թ. հուլիսին 2010թ. հուլիսի համեմատ արձանագրվել է 16.5%, իսկ 2011թ. հունիսի համեմատ՝ 34.9% գնանկում: Վերջինս մեծապես պայմանավորվել է լոլիկի 61.4%, կանաչ լոբու 58.2%, կանաչ պղպեղի 51.8%, սմբուկի 45.7%, ճակնդեղի 45.6%, կաղամբի 42.3%, գազարի 41.6%, կարտոֆիլի 40.2% գնանկումով: 2011թ. հուլիսին հունիսի համեմատ սիստորի գինը նվազել է 21.3%-ով, կանաչ սոխինը՝ 9.2%-ով, խառը կանաչեղենինը՝ 8.0%-ով, գլուխ սոխինը՝ 7.3%-ով, վարունգինը՝ 5.8 %-ով, սնկինը՝ 4.0%-ով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբի գները նվազել են 36.4-24.8%-ով, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայրաքաղաքում:

Մրգի ապրանքախմբում<sup>1</sup> 2011թ. հուլիսին 2010թ. հուլիսի համեմատ արձանագրվել է 3.3% գնաճ, իսկ 2011թ. հունիսի համեմատ՝ 23.3% գնանկում: Վերջինս հիմնականում պայմանավորվել է ձմերուկի 71.7%, սեխի 62.1%, ծիրանի 58.3%, դեղձի 50.8%, սալորի 45.8%, խնձորի 27.9% գնանկումով: 2011թ. հուլիսին հունիսի համեմատ տանձի գինը նվազել է 18.9%-ով, բալինը՝ 6.2%-ով, կիտրոնինը՝ 4.0%, ադամաթզինը՝ 0.3%-ով: Հանրապետության դիտարկված քաղաքներում մրգի գները նվազել են 17.8-43.0%-ով, ընդ որում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Թալինում: Մայրաքաղաքում մրգի գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ նվազել է 18.9%-ով:

**2011թ. հուլիսին հունիսի համեմատ մրգի, բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբերի ընդհանուր գնանկումը կազմել է 30.7%: Վերոհիշյալ ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 9.92% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի նվազմանը 3.04 տոկոսային կետով:**

Կաթնամթերքի ապրանքախմբում 2011թ. հուլիսին 2010թ. հուլիսի համեմատ արձանագրվել է 20.5% գնաճ, իսկ 2011թ. հունիսի համեմատ՝ 1.4% գնանկում: Վերջինս հիմնականում պայմանավորվել է <<Չանախ>> և <<Լոռի>> տեսակի պանիրների՝ համապատասխանաբար 5.3% և 4.9% գնանկումով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2011թ. հուլիսին հունիսի համեմատ գրանցվել է կաթնամթերքի 2.1-0.2% գնանկում, ընդ որում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում: Մայրաքաղաքում կաթնամթերքի գները նվազել են 1.4%-ով:

2011թ. հուլիսին 2010թ. հուլիսի համեմատ հացամթերքի ապրանքախմբում գրանցվել է 16.3% գնաճ, իսկ 2011թ. հունիսի համեմատ՝ 0.6% գնանկում (հիմնականում պայմանավորված բարձր և առաջին տեսակի ալյուրների՝ համապատասխանաբար 3.6% և 1.3% գնանկումով):

2011թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է ձվի, ձկնամթերքի, շաքարավազի, ոչ ոգելից խմիչքի 1.1-0.1% գնանկում, իսկ կենդանական և բուսական յուղերի ապրանքախմբում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Մսամթերքի ապրանքախմբում 2011թ. հուլիսին 2010թ. հուլիսի համեմատ գրանցվել է 12.0%, իսկ

<sup>1</sup> 2011թ. հունիս-հուլիսին 2010թ. հունիս և հուլիս ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների և գների տոկոսային փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

2011թ. հունիսի համեմատ՝ 2.9% գնաճ: Վերջինս հիմնականում ոչխարի, տավարի և խոզի մսերի համապատասխանաբար 4.1%, 4.2% և 14.0% գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2011թ. հուլիսին հունիսի համեմատ արձանագրվել է մսամթերքի 0.8-9.3% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Գյումրիում: Մայրաքաղաքում մսամթերքի գներն աճել են 2.6 %-ով:

2011թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է այլ մթերքի, ոգելից խմիչքի և ծխախոտի, հրուշակեղենի, սուրճի, թեյի, կակաոյի 0.1-0.9% գնաճ:

**Ոչ պարենային ապրանքների գներ:** 2011թ. հուլիսին հունիսի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրված գների անփոփոխ ընդհանուր մակարդակի պայմաններում դիտարկվող որոշ ապրանքատեսակների գներն աճել են, որոշ տեսակներին էլ նվազել:

2011թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է մշակույթի ապրանքների 1.7%, այգեգործական ապրանքների 1.0%, կոշկեղենի 0.4%, անձնապիտո ապրանքների 0.3%, հագուստի և գործվածքի 0.2%, վառելիքի 0.2%, գորգեղենի 0.1% գնանկում, իսկ լվացող միջոցների, շինանյութերի, գրենական պիտույքների, տեքստիլեղենի, կենցաղային էլեկտրաապրանքների, գեղահարդարման ապրանքների, խոհանոցային սպասքի, կահույքի, ոսկերչական ապրանքների, դեղամիջոցների ապրանքախմբերում՝ 0.1-0.9% գնաճ:

2011թ. հուլիսին հունիսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գները մնացել են անփոփոխ: 2011թ. հուլիսին 2010թ. հուլիսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են համապատասխանաբար 23.2% և 28.4%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 22.7% և 25.2%-ով:

Հանրապետության դիտարկված 4 քաղաքներում 2011թ. հուլիսին հունիսի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1% գնանկում, 3-ում՝ 0.2-0.7% գնաճ, իսկ մյուս 4-ում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.1%-ով:


**Ծառայությունների սակագներ:** Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2011թ. հուլիսին հունիսի համեմատ արձանագրվել է սակագների 0.2% նվազում: Նշված ժամանակահատվածում հանգստի կազմակերպման ծառայությունների սակագները նվազել են 4.6%-ով, տրանսպորտինը՝ 1.3%-ով (ներքաղաքայինը՝ 2.4%-ով աճ, միջքաղաքայինը՝ 3.0%-ով նվազում), բնակարանային-կոմունալ ծառայություններինը՝ 0.3%-ով: Բուժսպասարկման և հանրային սննդի ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում աճել են համապատասխանաբար 0.6% և 1.0%-ով, իսկ կենցաղային բնույթի, մշակույթի ոլորտի, կրթության համակարգի, իրավական ու բանկային ծառայությունների ոլորտում սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2011թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետության դիտարկված 7 քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.3-0.1% նվազում, մեկում՝ 0.1% հավելաճ, իսկ մյուս 3-ում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Մայրաքաղաքում ծառայությունների սակագների մակարդակը նվազել է 0.3%-ով:

---


Ըստ գործող մեթոդաբանության. ՀՀ-ում գների դիտարկումը կատարվել է 2011թ. հուլիսի 1-ին. 11-ին և 20-ին կամ մոտակա օրերին Երևան քաղաքում և հանրապետության մարզերի 11 բնակավայրերում 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

**ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2011թ. հունվար-հուլիսին**  
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



**Արտարժույթի շուկա:** 2011թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետության սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի (հուլիսի 1-27-ի դրությամբ) համապատասխանաբար 3.0% և 1.9% նվազում (ՀՀ դրամը արժևորվել է): 2011թ. հուլիսին 2010թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գներն ու հաշվարկային փոխարժեքն աճել են համապատասխանաբար 0.4% և 2.0%-ով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների 3.7% հավելած և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 3.6% նվազում): 2011թ. հուլիսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 367.53 դրամ, ինչը 0.2%-ով գերազանցել է 2010թ. հուլիսի համապատասխան ցուցանիշը (366.78 դրամ):

**ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2010-2011թթ. հունվար-հուլիսին**  
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



**Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական միջին գները և գների ինդեքսները ՀՀ-ում և Երևան քաղաքում**

	Չափի միավորը	Գների ինդեքսը ՀՀ-ում, %				այդ թվում՝					
		2011թ.				Քաղաք Երևան					
		հունիսը		հուլիսը		Միջին գին (դրամ)				գների ինդեքս, %	
		2011թ. մայիսի նկատմամբ	2010թ. հունիսի նկատմամբ	2011թ. հունիսի նկատմամբ	2010թ. հուլիսի նկատմամբ	2010թ.		2011թ.		2011թ. հունիսը 2010թ. հունիսի նկատմամբ	2011թ. հուլիսը 2010թ. հունիսի նկատմամբ
						Հունիս	Հուլիս	Հունիս	Հուլիս		
<b>Միրգ, ընդամենը</b>		<b>104.6</b>	<b>129.7</b>	<b>76.7</b>	<b>103.3</b>	x	x	x	x	<b>120.6</b>	<b>104.6</b>
<i>այդ թվում՝</i>											
Խնձոր	կգ	103.5	235.9	72.1	151.8	521	558	1100	887	211.1	158.9
Տանձ	“_“	103	101.5	81.1	91.9	1345	1137	1030	949	76.6	83.4
Դեղձ					82.3		1013		886		87.5
Ծիրան	“_“		135.9	41.7	59.5	1249	1142	1870	669	149.7	58.5
Սալոր					68.8		922		611		66.2
Բալ	“_“		121.8	93.8	136.7	641	503	812	815	126.6	162.1
Ելակ	“_“	50	93.3	141.5	116.3	804	1017	759	1209	94.3	118.9
Զմերուկ	“_“		117	28.3	55.4	564	334	634	176	112.5	52.6
Սեխ				37.9	60.7		789		367		46.6
Արևադարձային պտուղ (նարինջ)	“_“	98.4	93.5	100.0	88.2	794	819	737	724	92.8	88.4
Կիտրոն	“_“	95.9	99.9	96.0	93.8	196	197	196	184	99.9	93.6
Ադամաթուզ (բանան)	“_“	97	104.1	99.7	106.1	844	826	895	881	106.1	106.6
<b>Բանջարեղեն և կարտոֆիլ, ընդամենը</b>		<b>74.4</b>	<b>114.6</b>	<b>65.1</b>	<b>83.5</b>	x	x	x	x	<b>117.1</b>	<b>83.6</b>
<i>այդ թվում՝</i>											
Կաղամբ	կգ	35.4	63.8	57.7	26.2	176	245	105	54	59.4	22.2
Լոլիկ	“_“	55	89.8	38.6	59.3	578	331	523	199	90.4	60.1
Վարունգ	“_“	73.1	115	94.2	86.2	265	346	279	268	105.3	77.6
Գլուխ սոխ	“_“	79.1	93.6	92.7	93.8	336	316	300	279	89.1	88.4
Գազար	“_“	111.3	121.5	58.4	78.2	476	420	564	309	118.4	73.6
Սեղանի ճակնդեղ	“_“	108.3	170.4	54.4	97.8	279	286	556	279	199.2	97.6
Սխտոր	“_“	89.1	123.8	78.7	109.6	1699	1586	2138	1658	125.8	104.5
Սմբուկ	“_“	80.2	86.1	54.3	97.2	1111	537	937	495	84.4	92.3
Կանաչ պղպեղ	“_“	50.1	88.9	48.2	100.5	1176	483	999	480	84.9	99.3
Կանաչ լոբի		47.5	110.8	41.8	71.4	693	474	861	349	124.3	73.5
Սունկ	“_“	94.9	95	96.0	99.0	1519	1357	1432	1384	94.3	102.0
Կարտոֆիլ	“_“	87.1	164.3	59.8	95.1	183	197	329	191	180.3	97.2

**Հավելված 2**

**Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում<sup>1</sup>**

(%)

	2010թ. դեկտեմբերը 2009թ. դեկտեմբերի նկատմամբ	2011թ.						հունիսը 2010թ. դեկտեմբերի նկատմամբ
		հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	
		<i>նախորդ ամսվա նկատմամբ</i>						
Ավստրիա	102.2	99.9	100.8	101.2	100.6	99.9	100.0	102.4
Բելգիա	103.4	98.8	102.2	100.4	100.3	100.2	100.3	102.3
Բուլղարիա	104.4	100.5	100.6	100.4	99.9	100.1	99.7	101.1
Հունգարիա	104.6	100.9	100.4	101.0	100.7	100.2	99.8	103
Գերմանիա	101.9	99.5	100.6	100.6	100.3	99.8	100.0	100.8
Հունաստան	105.2	99.0	98.7	103.2	100.7	100.2	99.8	101.5
Դանիա	102.8	100.1	101.0	100.6	100.4	100.2	99.7	102.1
Իռլանդիա	99.8	99.7	100.9	100.5	100.3	100.0	...	...
Իսպանիա	102.9	98.7	100.1	102.4	100.9	99.9	99.8	101.7
Իտալիա	102.1	98.4	100.2	102.2	101.0	100.2	100.1	102
Կիպրոս	101.9	99.6	100.4	101.0	101.4	100.6	100.7	103.9
Լատվիա	102.4	101.3	100.3	100.7	101.1	100.4	100.2	104.1
Լիտվա	103.6	100.4	100.1	101.0	101.0	100.8	99.9	103.2
Լյուքսեմբուրգ	103.1	99.7	101.5	100.8	100.4	100.1	99.9	102.5
Մալթա	104.0	98.7	99.7	101.5	102.1	101.3	100.5	103.9
Նիդերլանդներ	101.8	99.9	100.9	101.4	100.6	100.2	99.4	102.3
Լեհաստան	102.9	101.0	100.2	100.9	100.5	100.5	99.7	102.8
Պորտուգալիա	102.4	100.5	99.9	101.6	100.6	99.9	99.8	102.3
Ռումինիա	107.9	100.8	100.8	100.6	100.7	100.2	99.7	102.8
Սլովակիա	101.3	102.1	100.3	100.4	100.5	100.3	99.9	103.5
Սլովենիա	102.2	99.6	100.0	101.4	100.7	100.8	99.4	101.9
Միացյալ Թագավորություն (Մեծ Բրիտանիա)	103.7	100.1	100.7	100.3	101.0	100.2	99.9	102.2
Ֆինլանդիա	102.8	100.4	100.8	100.6	100.2	99.9	100.3	102.0
Ֆրանսիա	102.0	99.7	100.5	100.9	100.4	100.1	100.1	101.6
Չեխիայի Հանրապետություն	102.3	100.8	100.0	100.2	100.2	100.6	99.9	101.7
Շվեդիա	102.1	99.1	100.5	100.4	100.3	100.0	99.7	100
Էստոնիա	105.4	100.0	100.7	100.8	100.8	100.4	99.9	102.5
<b>Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ -27)<sup>2</sup></b>	<b>102.6</b>	<b>99.6</b>	<b>100.5</b>	<b>101.1</b>	<b>100.6</b>	<b>100.1</b>	<b>99.9</b>	<b>101.8</b>
<b>Հայաստան</b>	<b>109.4</b>	<b>103.4</b>	<b>100.9</b>	<b>100.8</b>	<b>99.8</b>	<b>100.0</b>	<b>98.6</b>	<b>103.5</b>
Ռուսաստան	108.8	102.4	100.8	100.6	100.4	100.5	100.2	105.0
Բելառուս	109.9	101.4	102.7	101.9	104.5	113.1	108.6	136.2
Ուկրաինա	109.1	101.0	100.9	101.4	101.3	100.8	100.4	105.9
Ղազախստան	107.8	101.7	101.5	100.5	100.5	100.5	100.3	105.1
Ղրղզստան	119.2	102.7	101.4	102.2	100.4	99.7	100.6	107.2
Սոլովովա	108.1	101.1	101.2	100.8	101.0	100.6	100.1	105.2
Տաջիկստան	109.8	101.9	101.3	101.2	101.5	100.8	...	...
Ադրբեջան	107.9	100.8	102.2	101.1	99.7	99.6	99.1	...
Վրաստան	111.2	102.1	102.8	100.0	99.9	100.4	96.0	100.9
Կանադա	...	100.3	100.3	101.1	100.3	100.7	99.3	102.0
Նորվեգիա	102.7	99.2	100.5	100.4	100.6	99.7	99.6	100.0
Բրազիլիա	105.9	100.8	100.8	100.8	100.8	100.5	100.1	103.9
Կորեայի Հանրապետություն	102.7	100.9	100.8	100.5	100.0	100.0	100.2	102.4
ԱՄՆ	101.5	100.5	100.5	101.0	100.6	100.5	99.9	103.0
Թուրքիա	106.4	100.4	100.7	100.4	100.9	102.4	98.6	103.4
Շվեյցարիա	...	100.0	100.3	100.7	100.0	99.9	100.0	100.9
Ճապոնիա	99.7	99.8	99.9	100.3	100.3	100.1	...	...

... - Տվյալները բացակայում են:

<sup>1</sup> Տեղեկատվությունը պատրաստվել է Եվրոստատի, ազգային վիճակագրական ծառայությունների կայք էջերում, ինչպես նաև ԱՄՀ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտների պահանջներին համապատասխան ԱՄՀ-ի կայք էջում գետեղված ցուցանիշների հիման վրա:

<sup>2</sup> Եվրամիության երկրների համար ներկայացված է միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

<<Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2011թ. հունվար-օգոստոսին>> մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն <<2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի>>, նախատեսված է 2011թ. օգոստոսի 31-ին (տես՝ ծածկագիր 1300-301, Հավելված 3, էջ 62):